

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԱՍՏՈՒԱԽԱՆԻ

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԱՍՏՈՒԱԽԱՆԻ կամ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ. — Հին վանք Գուգարաց

Ձորոփոր կամ աւելի Տաշիր գաւառի Դրսեղ աւանի մօտ, ձորակի մէջ։ ԺՌ դարուն երբ Մամիկոնեաններէն ոմանք եկան բնակու. թին Հաստատեցին Լոռիի լեռանց մէջ, Դրսեղ աւանը, իրենց հետ բերին իրենց աւանդութիւնները, որ առկաւին ժողովրդեան բերանն են։ Նոքա այս ահակի ձորերու մէջ կամուրջներ կառուցին, յուարձաններ և աղօթարաններ կանգնեցին, որոնք առկաւին կը մնան կանգուն կամ կիսակործան վիճաւ։




ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄԷ

կի մէջ։ Նոյն ժամանակները Մամիկոնեանները կառուցին իրենց յատուկ աւանդական գերեզմանատուն և աղօթարան այս Բարձրաբաշ Ս. Գրիգորի ճերմակ վանքը, և ապահովեցին ընդարձակ կալուածներով և գիւղերով, ինչպէս կը յիշուի արձանագրութեանց մէջ։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ այնչափ բարձր էր վանքի կաթողիկէն, որ ծայրի խնձորը գաշաէն կ'երեւնար։ Վա-

րի ճանապարհը, ըստ երեւութին, հնումն ուրիշ կողմը և սալայառակ է եղեր։ Կորածանուած շարքուած խաչարձաններու հանդիպելով պէտք է մանկ ձորը։ Առաւօտի մէջ ահանջի կը զարնէ Ս. Գրիգորի աղբիւրի տխուր խօսքիւնը։ Աղբիւրէն անցնելով, ճանապարհին կը հանդիպին վանքի ձիթահանքի ահագին բարերը, վրան գրուած Սարգիս Մարտպանի որպոյց անունները։ Քիչ մ'ալ

առաջ երթալով՝ կանաչ անտառի մէջ յան-
կարծ մէջ տեղ կ'եննեն Մամիկոնեաններու
Քարձրաքաջ տանարի սպիտակ աւերակնե-
րը։ Արեւելեան պատի Հարաւային մասն
կտոր մը կործաներ է, և բոլորովին կը կոր-
ծանէր, ինչպէս կ'ըսեն գիւղացիք, եթէ Յո-
վակիմ (ուգրաշի) անունով մէկը, բարեբոլ
չամբողջնէր։ Այս պատի վրայ կայ գեղա-

քանդակ երկգլխանի թեւատարած արծիւ՝
ճանկերու մէջ զառն բռնած։ Վանքիս կա-
թուղիկէն կործանած լցուած է մէջը. բե-
կորներու կոյտերու միջէն բարձրացած են ա-
հագին ծառեր։ Աւերակ և ամայի վանքիս ար-
ձանապարտութիւնները հրատարակած է Ջալա-
լեան, Բ 108: — Սրաքս, 1897 Բ 47-
48:



ԲԱՐՔԱՐԱՔԱՆՈՒՄ ԵՒ ԳԵՂԱՐԱՔԱՆՈՒՄ

ԳԱՅԻԱՆԵՒԻ (Ս.) ՎԱՆՔԸ


ԳԱՅԻԱՆԵՒԻ (Ս.) ՎԱՆՔԸ. — Աւրա-
բաւայ Արաքածան գաւառի մէջ, Էջմիածնի
արեւելեան Հարաւային կողմը կը գտնուի
անուանի և Հինաւորք վանքաւ։ Աղաթանգե-
ղոսի գրութեան համեմատ, կառուցուած է
ճիշդ այն տեղը, ուր նահատակուեցաւ սրբ-
բուն Հին Գայիանէ երկու բնիկերաց հետ։ Սուրբն

Գրիգոր 304 թուականին, բազմաթիւ հա-
ւատացեալաց հետ հիմնարկած է վիպարանոս,
և մէջը ամբողջած Ս. Գայիանէի և երկու
բնիկերաց նշխարները։ Վանքս իւր առաջին
շինութենէն վերջ, գրեթէ 329 տարւոյ չափ,
չի յիշուիր յոճաթս պատմութեան մէջ։ Հան-
գոյն Ս. Հովհաննիս վանաց, Եզր կաթողի-
կոսը 630 թուին, տեսնելով որ Ս. Գայիա-
նէի եկեղեցին խիստ մթին և խեղճ չիւնուած

էր, քակել տալով աւելի ընդարձակ և փառաւոր կառուցանել տուաւ զայն կոփածոյ քարերով, և ինչպէս կ'ըսէ Յովհաննէս կաթողիկոս. « և յարտաքուստ յարդարէր կալանս ընակութեան քահանայական գոսուցի պաշտօն աստուածային խորանին »:

Հազար տարիէն աւելի մեզ յայտնի չէ թէ ինչ գէպեր հանդիպեցան վանքիս, միայն Առաքել պատմիչ մանրամասն կը նկարագրէ, թէ շատ տարիներ անցնելով բոլորովին աւերած էր Ս. Գայիանէի տաճարը, իման

զի տանիքը խոնարհած էր և միայն շորս սինները և որմերը կանգուն մնացած էին: Փիլիպպոս կաթողիկոսը 1654 թուին սկսաւ տաճարին նորոգութիւնն, և շատ ծախս ընելով ի հիմանց մինչեւ գաղաթը գեղեցկաշէն աւարտեց և զմրեթի վրայ դնել տուաւ տէրունական խաչի նշանը: Եւ որովհետեւ աւագ խորանի ներքեւ շինուած մատուռը ուր դրուած էին սուրբ կուսանաց նշխարները,



Ս. ԳԱՅԻԱՆԵՒԻ ՎԱՆՔԸ :
Հոր փոխ.

բոլորովին աւերած էր¹, և նոյն իսկ աւագ բմբը քանդուած էր մինչեւ յատակը, Յովհաննէս անուամբ արեգայ մը, ծածկապէս հիմունքը պեղելով գտաւ երեք տապաններ, եկեղեցւոյ հիման տակ, մին՝ հարաւային կողմը, միւսն՝ հիւսիսային կողմը և երրորդը՝ արեւելեան կողմը, և պատմչի գրածին համեմատ, Ս. Գայիանէի ու երկու ընկերաց նշխարներէն՝ մասն մի առնելով, տապաննէրը վերստին հողով ծածկեց և անյայտ ըրաւ:

Հռոմկալեցի Եղիազար կաթողիկոսը 1688 թուին, եկեղեցւոյ արեւմտեան դրան դիմաց շինեց բոլորովին նոր և գեղեցիկ գաւիթ մը, և երկու ծայրերը մէկ մէկ փոքրիկ խորան Պետրոս և Պողոս առաքելոց անուամբ, որոց պատկերներն ալ սրմնց վրայ նկարել տուաւ, ինչպէս նաեւ իւր պատկերը դրան աջակողմը: Այս խորաններու վրայ շինել տուաւ նաեւ երկու փոքրիկ կաթողիկէներ՝ իրեն զանգակատուն: Նոյն Եղիազար կա-

Թողիկոսը կառոյց նոյնպէս բնակարաններ միաբանութեան համար, և շրջապատեց բուր վանքը պարսպով, որոնց համար յառուէլ յիշատակարան մը արձանագրեց եկեղեցւոյ արեւմտեան պատի դրան աջ կողմը, որ և կը մնայ մինչեւ հիմա: Եկեղեցւոյ առաջ դրան աջ կողմը կամարի տակ կայ գեղեցկաքանդակ կարմրաքար խաչարձան մը, որ հնութենէ և անզուլթ ձեւերէ խանգարուած է, և ունի հետեւեալ արձանագրութիւնը. «Թ. Ձ. 26 (626) Խաչիս գծաւ». այս

թուականը եթէ ստոյգ է, Եղրի ժամանակին կը վերաբերի: Ջաքարիս սարկաւազ պատմագիրը յիշելով Եղիազար կաթողիկոսի շինութիւնները, կ'ըսէ նաեւ թէ զաւթի հիւսիսային կողմը եղած խորանի առջեւ շինեց և իւր գերեզմանը: Թէպէտեւ Էջմիածնի վանքը ունի իրեն մօտ յատուկ գերեզմանատուն, սակայն երկու դարէ աւելի է, որ սովորութիւն գարձած է, կաթողիկոսները թաղել Ս. Գայիանէի վանքի զաւթիք, բաց ի մէկ քանիէն, որոնք զանազան պատճառ



ՆԵՐՍԻՍԻԱՆ Ս. ԳԱԹԻԱՆԵՒԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻԱՆ ԼՃԱՅԻ ՄԷՏԵՆԴ:

ներով թաղուած են ուրիշ տեղեր: Եղիազար կաթողիկոսի և ուրիշ մի քանի տապանաքարեր պատերազմաց ժամանակ անհետ եղած են կամ եղծուած, իսկ արձանագրութիւններով հանդերձ, ծանօթ տապանաքարերն կը վերաբերին Ա. Ղազար Զահեցւոյն, † 1751. Բ. Յակովբ Շամախեցւոյն, † 1763 (21 մարտի — 1 ապրիլ). Գ. Սիմէոն Երեւանցիին † 1780 (26 յուլ. 6 — օգոստ.). Դ. Ղուկաս Կարնեցւոյն † 1799 (29 դեկտ. 9 յունուար 1800). Ե. Յովսէփ Ար-

ղութանցի † 1801 (9—21 մարտի). Զ. Դաւիթ Էնդէլմեցւոյն † 1817 (նոյեմբ. 1—13), և Է. Մատթէոս Կ. Պոյսեցւոյն † 1865 (26 օգոստ. 7 սեպտ.). ինչպէս նաեւ Աբրահամ Բ Մշեցւոյն † 1734 և Միստա Ակնեցւոյն † 1753, որոնց տապանաքարինք կը պահուին:

Եղիազար կաթողիկոսին վերջ, գրեթէ 200 տարի վանքս մնացած կը թուի առանց վերանորոգութեան և խնամքի: Գեղեցկաշէն եկեղեցւոյն կաթուղիկէի մէկ մասը և մի

քանի կամարներ ճեղքուած էին վտանգաւոր կերպով, որմերն ալ ներսէն և դրսէն խառ-
զարուած և քարերէն շատերը խախտած: Ե-
կեղեցւոյ մէջ կը տիրապետէր սաստիկ մթու-
թիւն և խոնաւութիւն, պատուհաններէն շա-
տերը հիւսած էին, և մնացած էին միայն
հինգ վից փոքրիկ պատահաններ: Վանքը
քանի մը մուփ և խարխուլ սննեակներէ զատ
բնակարան չունէր. արտաքին պարիսպն ալ
սեղ տեղ փեր էր: Վանացս վանահայրերու
մէջ հռչակաւոր հանդիսացած է վանան
Քաստամանն՝ որ 1872 թուին Գեորգ Դ
կաթողիկոսէն ստանձնելով վանահայրութեան
պաշտօն, կարեւոր նորոգութիւններով պայ-
ծառացուց վանքս: Հիւսուած պատուհաննե-
րը բացաւ և մեծցուց 18 պատուհան, նո-
րոգեց զմեթը և որմերը. եկեղեցւոյն մէջն
ալ զարդարեց բիւրդեղայ ջահով, կարեւոր
պատկերներով, խաչերով և այլ պատանքերով:
Խարխալուած պարիսպներն ալ նորոգելով,
եկեղեցւոյն մեծ դրան դիմաց, բոլորովին նոր
պարսպի վրայ բացաւ կամարակապ մեծադիր
դռներ: Նոյնպէս կառոյց վայելուչ բնակա-
րան վանահօր՝ չորս սննեակներով և կա-
րեւոր կահ կարասիքով, և փոքրիկ դպրոց մը
և տպագրատուն՝ ուր կը տպագրէր Դպրոց
անուամբ ամսաթերթ մը, որ հազիւ երկու
տարի տեսնց, շատ ծախուց և իրեն Եւրոպա
գտնուելուն պատճառաւ: Եւրոպայէն գտ-
նալով 1879ին, վանացս մէջ հաստատեց
Ազգագրական թանգարան մը, Հայոց զգեստ-
ներու, տարազներու, կահ կարասեաց, ձե-
ռագործաց և այլ իրաց, բայց ափսոս որ
շուտով վախճանեցաւ 1884ին (10 նոյ. —
12 դեկտ.), իրեն օրէնսդատական հմուտ-
թեանց յիշատակ թողլով զովիլի գրուածքն՝
Իրաւաբանական հետազոտաբան Դատաս-
տանագրոց Միխիթար Գոշի: Յաւալի է ըսելն,
որ Վ. Քաստամանեցի յաջորդներն, նոյն
կերպով առաջ չեն տարած իրենց վանա-
հայրութեան պաշտօնն, հոգ տանելով վա-
նացս նորոգութեանց և պայծառութեան: —
Ստոր. Կարողիկէ Էջմիածնի, Ա. 273—280,
Արարատ ամսագիր, է. 29—32: Արարատ,
244—244, Եւ այլն:

Հ. ՍՈՒԽԻԱՍ ԷԲՐԻԿԱՆՍ



ՆԱՅ ՄԵՐԱՏՈՒՆՆԵՐԸ

Ա.

ՀԱՅ մեծատուններն առ հասարակ ճանցուած են
Ահիշայ անունով:

Ահիշայ — Տոմարեան, Տանուաբ, Մեծաւոր, Չէլե-
պի, Հոճայ — բառերուն համազօր բառ մը, որ կը պա-
րուակէ տունիկն ինչ մեծութեանց պարարտ զաղա-
փարը:

Ահիշայ — կը թելադրէ մանաւանդ անձանթ ուս-
գութեան (dignité) մը զաղափարն ալ բնական սաս-
տալից ամէն մեծութեանց պէս, որ ունին անձանթ
սկիզբ մը. սկիզբ մը՝ թելուս նահապետական դարերու
լափ ինչ ու իրենց անփաստ ներդաստութեանն համե-
մատ միջին այլ իրական:

Պատմապէս ալ սակայն՝ իբրեւ ծագեալ արքայական
Դր. Էդի, Դիւիդեան բառերէն՝ շատ նոր է ու կը նշա-
նակէ՝ դէ՞ ըստ ծայնակների՝ հրաժար, հրաժար, ինքն՝
այլ սեմական ժողովուրդին սկզբնական առան-
դականութեամբ՝ ժառանգուած ըլլալ յաջորդաբար
Միջնադարի և Պաշտօնորդին ամուսնութեան ու նշա-
նակէ, ըստ այնմ. Նախադար կամ Նահադար՝ գրեթէ
համազօր նախին Հռոմայեցիներուն Պառլի կալուածին՝
քիչ մը սեղմելով այս բառին քաղաքական լայնութեան
և ի փոխարէն լայնելով անոր ամուսնութեան աստուծոյ:

Ահիշայ բառը՝ մտահոնապէս չէ յիշուած նորոգու-
մէջ Մարտիրոսէն, Արծրունիէն, Ուսուցիցիէն առաջ-
օրինակ. « Այլ արար մանեայն մտաւոր ամբարայն »,
« Այլ մակեանուդ ամբարայնական սերի յԱրքանաձէ Մա-
հիւր. Է. որով կըրնանք ըսել թէ նկիւնակական այլ
զաղափարներ շատ ետքը մտած է մեր մէջ՝ ամբարայն-
անունը:

Ամբարան ունեցած ենք մենք ալ. և անոնց անունը
ընդհանուր է՝ մանաւանդ թուրքահայերուն՝ պատմու-
թեան նոս 1530էն առդին մինչեւ 1866 կամ 1870,
մինչ միտաւ ամբարաններն իբրեւ վերջինիս ուս հիշ-
հառաքն ալ — կարապետ ամբարայ Պաշեան, արքունի
մեծ նալ շարադարապետ, Խաչաւ:

Այսպէս՝ ի չզույժ ժամանակակից ամբարայ՝ արդի սե-
րունդը չէ տեսած ու յօշոթած ամբարայ մը, չունի ա-
մբարայութեան վրայ կայուն՝ այսինքն՝ դիրք տեսնուած
զաղափար մը, ժողովածու դարձաւ պատմութեան մէջ
զատ, որ ամբարաներու էութեան և երանգին վրայ

1. զամս զի իրմէն ետքը 1869ին վախճամած է
ամբարայապետի ճատեան Յովնամմէս պէյը, արքու-
նի վառողապետ ու քարեղար Ազգ. հիւանդանոցին
ու մատնմագրակամ և դպրոցակամ ձեռնարկու-
թեանց: